ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ՄԵՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ

Կամոքն Աստծո եւ մեր ժողովրդի ընտրությամբ տասը տարի առաջ՝ 1999 հոկտեմբերի 27-ին, Լուսավորչի գահակալ ընտրվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը:

Որպես ԻԱ դարի առաջին ընտրյալ Հայրապետ՝ Գարեգին Բ սրբազնագույն Կաթողիկոսը իր ուսերին կրեց Հայոց Հայրապետության ծանրագույն լուծը եւ Սուրբ Էջմիածնի խորհրդով ապավինելով Աստծուն ու իր ժողովրդի իմաստությանը՝ ձեռնամուխ եղավ առաջին հերթին Մայր Աթոռի եւ միաբանության ներքին կյանքի կազմակերպմանը, ուսումնական հոգեւոր հաստատությունների հզորացմանը, որը պիտի իրական դարբնոց դառնար այսօրվա հավատավոր մտավորական, հոգեւոր արժանիքներով հարստացած երիտասարդ միաբան եկեղեցականների, որոնցից շատերը Մայր Աթոռում, Գեւորգյան եւ Վազգենյան ճեմարաններում ստանձնել են դասախոսական եւ վարչական շատ դժվարին ու պատասխանատու աշխատանքներ:

Մեր ասելիքից դուրս են հոգեւոր բոլոր բնագավառները, որոնք այսօր Գարեգին Բ Հայրապետի հոգածության ներքո առաջ են տարվում:

Մասնագիտությամբ լինելով ճարտարապետ՝ հպարտություն եմ ապրում այն ամենի համար, որ մեր սիրելի Վեհափառը վսեմին եւ գեղեցիկին ունեցած իր մեծ սիրով, իր հոգեկան արիությամբ արել եւ անում է հսկայածավալ այն եկեղեցաշինությունը, ստեղծագործող ու անընդհատ շինող իր հատկությամբ, որ քաղաքական կացության արդյունքում մեզանում մոռացության էր տրվել անցած յոթ տասնամյակներում:

Բոլոր տեսակի հասարակական եւ անհատական մեծ ու փոքր շինությունների կառուցման մեջ ճարտարապետի սեփական ճաշակով են ձեւավորվել կառույցի հատակագծային, ծավալատարածական լուծումները, որոնք հարմարեցվել են տեղանքին եւ բնությանը՝ միաձուլելով արվեստն ու բնությունը:

Կրոնական հոգեւոր կառույցներում ճարտարապետները հարազատ մնացին Առաքելական Եկեղեցու խորհուրդներին, ծեսերին, որոնց հեղինակները հոգեւորականներն էին եւ որոնց մտահղացումներն էլ իրականություն դարձրեցին հոգեւորական ճարտարապետները: Եւ քանի որ հոգեւոր կառույցները գլխավոր ազդակ հանդիսացան մշակույթի եւ արվեստի զարգացմանը, իրենք էլ խթանեցին ընդհանրապես ճարտարապետության զարգացումը:

Հայ քաղաքակրթության հիմքերից են հոգեւոր - մշակութային կառույցները, որոնք ձեւավորվեցին հազարամյակների ընթացքում՝ անսասան պահելով հավատքին նվիրված տաճարի կառուցման սկզբունքները՝ միաժամանակ զարգացնելով եւ հղկելով մշակույթը եւ արվեստը:

Հոգին անմահ պահելու ճանապարհին հոգեւոր արվեստագետները եւ առաջնորդները երկրի վրա թողեցին իրենց մտքի, ճաշակի գերագույն արտահայտությունները, որոնք այժմ մենք անվանում ենք մշակութային ժառանգություն:

Մշակույթի հետ երկար տարիների շփումը, զեղեցիկի զգացողությունը, նրբին ճաշակը հոգեւոր գործիչներին առաջնորդեցին դեպի արվեստի բարձրագույն գահ, որով հնարավորություն ընձեռեցին ազգի մշակույթը աշխարհին ներկայանալի դարձնելու եւ այսօր մտնելու մշակութային ժառանգության համաշխարհային գանձարանը:

Հոգեւոր իշխանությունը հնարավորություն է տվել հայ կաթողիկոսներին կառուցել ի փառս իրենց եւ հոգուտ ազգային մշակույթի եւ ճարտարապետության. Ներսես Շինարար, որի մտքի եւ ճաշակի արգասիքը հանդիսացավ Զվարթնոցի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարը, Կոմիտաս կաթողիկոս - Սուրբ Հռիփսիմե, Եզր Կաթողիկոս - Սուրբ Գայանե. տաճարներ, որոնք հայ ճարտարապետության աղամանդակուռ թագի գոհարներն են:

Վառ երեւակայության եւ ճաշակի տեր ճարտարապետի անձնական նկարագիրը եւ գործելակերպը բավարար չեն, եթե նրա հնարավորությունները չեն ուղղորդվում պատվիրատուի ցանկություններով, առաջարկով եւ ճաշակով:

Ինչպես շատ կաթողիկոսներ, Գարեգին Բ Կաթողիկոսը նույնպես հոգեւոր եւ մշակութային մեծ ծրագրեր է փայփայել, որոնց իրագործման համար առիթը կաթողիկոսական գահն էր: Մինչ կաթողիկոսական աթոռը՝ Արարատյան թեմի առաջնորդության տարիներին ձեռնարկած աշխատանքները իր ժամանակի համար համարձակ եւ բազմաթիվ էին. Նորքի զանգվածի Սուրբ Սարգիս եկեղեցու կառուցումը, Մաշտոցի փողոցին հարող Սուրբ Սարգիս եկեղեցու զանգակատունը, Սեւանի դպրատունը եւ եկեղեցին, Սեւանի վանքային համալիրի եկեղեցիների վերականգնումը, Նորագավթի վանքային համալիրի վերականգնումը…

Քսաներորդ դարի իննսունականների սկիզբին վերջ դրվեց մի համակարգի, ուր մինչ այդ նոր հոգեւոր կառույցների՝ եկեղեցիների կառուցումը արգելված էր մոտավորապես մեկ հարյուրամյակ: Եթե հաշվի առնենք նաեւ այն հանգամանքը, որ տասնութ եւ տասնիններորդ դարերը ոչ մի նշանակալից հոգեւոր կառույց չստեղծեցին քաղաքական անբարենպաստ իրադարձությունների ու պատերազմների պատճառով, ապա պարզ է դառնում, որ եկեղեցաշինության արվեստը երեք հարյուր տարի զարգացում չունեցավ: Հասարակական- քաղաքական նոր պայմաններում Հայ Առաքելական Եկեղեցու համար սկսվեց նոր՝ հոգեւոր վերելքի ժամանակաշրջան՝ առկա բոլոր խնդիրներով: Վերելքը ապահովելու պայմաններից առաջնայինը Հայաստանի տարբեր շրջաններում հոգեւոր դասի առավել ամրապնդման հետ միաժամանակ նաեւ Առաքելական Եկեղեցին հոգեւոր սպասավորներով ապահովելն ու

վերջիններիս հոգեւոր կրթություն տալն էր: Հաջորդ խնդիրն էր Առաքելական Եկեղեցուն վերադարձնել իր կառույցները (վանքերը, եկեղեցիները). հանգամանք, որը նույնպես պետք է ապահովեր Հայ Եկեղեցու հոգեւոր վերելքը:

Իննսունականների սկզբի հասարակական-քաղաքական իրադրությունից օգտվեցին նաեւ շատ աղանդներ, որոնք իրենց սարդոստայնը գործեցին Հայաստանի տարբեր շրջաններում: Սա նույնպես կարեւոր խնդիր էր: Դեռեւս Արարատյան թեմում առաջնորդական փոխանորդի պաշտոնավարության շրջանում՝ 1996-ին, Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը ձեռնարկեց Սեւանի Վազգենյան դպրանոցի կառուցումը: Պատվիրված նախագծի հեղինակն էր Օլեգ Շոկոեւը:

Դպրանոցը կառուցվեց Սեւանի թերակղզու հյուսիսային կողմում՝ բլրի տակ, ուր նախկինում եղել էին վանականների կացարաններ: Կար պահպանված մեկ հարկանի մասնաշենք, որը համայնավարական կարգերի ժամանակ օգտագործվում էր որպես հանգստյան տուն: Այս կառույցից հյուսիս-արեւելք՝ վանական կառույցներին հատուկ մեկ բակի շուրջ ձեւավորվեց երկհարկանի, կիսանկուղային հարկաբաժնով դպրատուն: Դա հարյուրամյա դադարից հետո առաջին համարձակ քայլը եղավ կերտելու նման կառույց, ուր այժմ հոգեւոր կրթություն են ստանում ուսանողները: Շենքը հյուսիս-արեւելք անկյունով տեղադրված մի կառույց է, որի արեւմտյան թեւը մեծ կամարակապ բացվածքով միանում է հին մասնաշենքին: Դեպի լիճը նայող արտաքին ճակատը լուծված է կամարակապ բաց պատշգամբներով: Կառույցը իրականացված է մոխրագույն բազալտ քարերով: Քարի գույնի պասիվությունն է, որ համալիրը միաձուլում է տեղանքին, եւ միայն մոտ տարածությունից այն դառնում է ավելի ցայտուն եւ ընկալելի: Շենքի երկու հարկերում տեղավորված են հարմարավետ կացարաններ ուսանողների համար՝ լոգարանով, փոքր նախասրահով: Դպրատունը ունի մարզադահլիճ, ճաշարան, գրադարան: Դպրատան բակում միաժամանակ կառուցվեց փոքր չափերի մի եկեղեցի, որի նախագծի հեղինակն էր Բաղդիկ Արզումանյանը: Այն հատակագծում վեց պայտաձեւ խորաններով, արեւելք-արեւմուտք առանցքով, արեւմուտքում զույգ սյուներով շրջափակված կամարակապ մուտքով կառույց է՝ տեղադրված ոչ շատ բարձր հարթակի վրա: Արտաքուստ այն տասներկու նիստերով ձեւավորված եռահարկ մի կառույց է՝ պսակված ռոտոնդայով: Եկեղեցու ծավալատարածական լուծումները հիշեցնում են Անի քաղաքի Հովվի եկեղեցին: Այսպիսով, առաջին անգամ երկար դադարից հետո սկիզբ դրվեց նոր հոգեւոր կրթական համալիրի՝ Սեւանի Վազգենյան դպրանոցին, որի բակում տեղադրվեց Վազգեն Ա Կաթողիկոսի բրոնզաձույլ արձանը: Համալիրը ունի իր տնտեսական բակը, ուր տեղադրված է կաթսայատունը, էլեկտրական ենթակայանը:

Նույն ժամանակ սկիզբ դրվեց առավել համարձակ կառույցի՝ Նորքի զանգվածում նոր եկեղեցու կառուցմանը: Ինչպիսին պիտի լիներ նոր եկեղեցին մոտ հարյուրամյա դադարից հետո: Հայաստանից դուրս հատուկենտ եկեղեցիներ կառուցվել էին, սակայն այս մեկը նորելուկ էր եւ կառուցվելու էր Երեւանում: Նախագիծը սկսվեց 1996 թվականին Բաղդիկ Արզումանյանի ճարտարապետությամբ: Այն

պահպանեց ավանդական լուծումները: Նոր խոսք ասելը դժվար էր. բացակայում էր մի ամբողջ հարյուրամյակի եկեղեցիաշինության կառուցողական արվեստը: Սակայն պահպանվածները օգնեցին գտնելու, համադրելու. արդյունքում կառուցվեց ներքուստ բազմախորան, նման գոյություն ունեցող ութախորան եկեղեցիների՝ Իրինդի Ս. Աստվածածնին, արեւելքում ավելի ընդգծված Ս. խորանով՝ նման Եղվարդի Զորավարին: Ս. խորանի երկու կողմերում տեղավորված են ավանդատները, որոնք կրկնվում են նաեւ արեւմուտքում: Հատակագիծը արտաքուստ խաչաձեւ է: Ի տարբերություն յոթերորդ դարի նմանատիպ եկեղեցիների, շոշափող բազմանիստ պատերը փոխարինված են անկյունային պատերով. արդյունքում եկեղեցու արտաքին խաչաձեւության ապահովումը հյուսիս-հարավ առանցքով եւ ուղղանկյուն խաչթեւերի ստացումը: Արտաքուստ եռահարկության տպավորությունը հիշեցնում է Զվարթնոցի տաճարը: Սակայն երկրորդ հարկը, կարծես թե, ընկղմված լինի առաջինի մեջ: Արեւմուտքից կցված է զանգակատունը: Ճարտարապետական մանր ձեւերը եւ զարդամոտիվները հիմնականում բացակայում են: Մուտքերը արեւմուտքից եւ հարավից են: Եկեղեցին տեղադրված է ոչ շատ բարձր բլրի վրա, որով եւ իշխող դիրք է գրավում շրջապատի նկատմամբ:

Հայ եկեղեցաշինական մշակույթը ունեցել է վերածնության մի քանի շրջան: Վերջին շրջանը տասնյոթերորդ դարն էր: Վերածնել այդ բարդ եւ դժվարին խնդիրը իրենց առջեւ դրեցին Վազգեն Ա, Գարեգին Ա Կաթողիկոսները, սակայն իրականացումը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընձեռվեց:

«Շարունակելու ենք ջանքերը՝ բարձրացնելու խոնարհուած եկեղեցիները, վերանորոգելու ու բարեզարդելու հայրենի դարաւոր սրբաւայրերը եւ կառուցելու նորերը՝ նուիրական երազով, որ ամէն բնակավայրում, մեծ քաղաքների թաղամասերում վեհաշուք յառնեն աղօթքի տները մեր՝ իրենց շուրջ սկիզբ տալով համայնքային բնականոն կեանքին:

Հոգեւոր սպասաւորների յաջորդական պատրաստութիւնը, նորաբաց եկեղեցիները յուսալի երաշխիքներ են դառնում Մայր Հայրենիքում եկեղեցական համայնքների լիարժեք կազմակերպման համար, որպէսզի Առաքելական մեր Եկեղեցին՝ մշտապես ներկայ իր հաւատացյալների առօրեայ կեանքում, լիարիւն իրականացնի մեր ժողովրդին հովուելու երկնատուր առաքելութիւնը՝ ջթողնելով բաց դաշտ օտարամուտ եւ օտարացնող հոսանքների գործունեութեան համար»,- կարդում ենք Գարեգին Բ Հայրապետի անդրանիկ կոնդակում:

Հայ Առաքելական Եկեղեցու 1700-ամյակի նախօրյակին աշխատանքները բազմաթիվ էին եւ բազմաբնույթ, սակայն դրանց մեջ կային առաջնահերթ խնդիրներ: Մայր տաճարում նորոգություններ վերջին անգամ կատարվել էին 30-50 տարի առաջ: Հիսունական թվականների նորոգության ժամանակ քարե տանիքածածկերը ծակվել էին կապարե թերթերով: Թերթերի տակ քարե ծածկույթը քայքայվել էր, կապարե թերթերի կարերը բացվել էին, անձրեւաջրերը շատ հատվածներում տանիքածածկից թափվում էին ներս: Անհրաժեշտ էր նորոգել տանիքածածկերը, ներսում մաքրել պատերը եւ որմնանկարները: Գրունտային ջրերի մակարդակը

բարձրացել եւ խոնավացնում էր պատերը: Այս եւ նմանատիպ խնդիրների համար կազմվեց հանձնախումբ, որը կատարեց ուսումնասիրական աշխատանքներ: Արդյունքները եւ առաջարկները ներկայացվեցին Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի քննարկմանը: Վերջնական որոշում ընդունվեց տանիքները վերականգնել ավանդական եղանակով, մաքրել պատերը եւ որմնանակարները մրից: Միաժամանակ խնդիր էր առաջացել տոնակատարության համար անհրաժեշտ բաց խորանի կառուցումը: Նախագծի հեղինակ ճարտարապետներ Ջիմ Թորոսյանն ու Ռոմեն Ջուլիակյանը առաջարկում էին բաց խորանը տեղադրել Մայր տաճարի հյուսիսային կողմում՝ տաճարին զուգահեռ: Բազմաթիվ քննարկումներից հետո Վեհափառ Հայրապետը առաջարկեց ամենաճիշտ լուծումը. տեղադրել Մայր տաճարի արեւելք-արեւմուտք առանցքով՝ վանքի ցանկապատի շարունակության մասում՝ կից տեղադելով նաեւ վանքի համար այնքան կարեւոր արեւելյան Գրիգոր Լուսավորիչ դուռը, որը խորհրդանշում էր Տրդատ թագավորի եւ Գրիգոր Լուսավորչի համատեղ մուտքը քրիստոնեություն՝ Հայ Առաքելական Եկեղեցի: Համալիրը իրականացվեց մոխրագույն արթիկ - տուֆ քարերով: Բաց խորանը կրկնում է սուրբ խորանը, միայն արտաքին սրահը բաց է: Խորանի արտաքին արեւելյան պատը իրականացված է միմյանց զուգահեռ, քիչ ընդգծված որմնապատերով: Գրիգոր Լուսավորչի դուռը՝ ստորին մասում չորս՝ Թադեոս եւ Բարդուղիմեոս, Տրդատ թագավոր եւ Գրիգոր Լուսավորիչ սյուների վրա բարձրացող աշխարհի չորս կողմերի վրա ընդգծված կամարներով միավորված մի կառույց է, որի միջով անցնող ճանապարհը տանում է դեպի տաճար. խորհրդանշական կոթող՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակին:

Այս ժամանակահատվածում օրհնվեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի խաչը: Վերջինիս նախագիծը հաստատվել էր դեռեւս Վազգեն Ա Կաթողիկոսի օրոք: Հիմնային մասերը իրականացվել էին Գարեգին Ա-ի օրոք, իսկ ամբողջ շինարարական աշխատանքները կատարվեցին Գարեգին Բ Կաթողիկոսի անմիջական ղեկավարությամբ:

Համայնավարական տարիներին Մայր Աթոռից խլել էին նրա տարածքների հիմնական մասը: Դրանց մի մասի վերադարձը արագացրեց Մայր Աթոռի գլխավոր հատակագծի մշակման եւ միաժամանակ մայրավանքին վերադարձնելու վանքի գործառույթները:

Նախապես կատարվեց տարածքի զոտեւորման նախագիծ: Կրթական մասին հատկացված տարածքը Գեւորգյան ճեմարանով, հանրակացարանային շենքով (կառուցվել էր Գարեգին Ա Կաթողիկոսի օրոք) միավորվեց կրթական կամ ուսանողական զոտու մեջ: Վերանորոգվեց Գեւորգյան ճեմարանը՝ ուսուցման համար ապահովելով առավել հարմարավետ պայմաններ: Այս զոտում այժմ կառուցման ընթացքում է Եղիշե Մանուկյան մատենադարան-գրադարանը, այն միաժամանակ նաեւ աստվածաբանական կենտրոն է, որով կլրացվի ուսանողական զոտու կառույցների ցանկը այնքան անհրաժեշտ այս կառույցով, որի նախագծի հեղինակն է Արտակ Ղուլյանը: Կառույցը հատակագծում արեւելքից արեւմուտք ձգված, սյունա-

զարդ կամարասրահով դեպի ճեմարան նայող երկհարկանի մի շինություն է: Ձգված միջանցքի երկու կողմերում տեղավորված են մատենադարանի բաժանմունքները՝ արեւելյան կողմում հարմարավետ ընթերցասրահներով, համապատասխան լսարաններով: Շենքի ճակատները մշակված են կամարների եւ կամարախորշերի ռիթմիկ շարքով, որոնց հանգուցային հատվածները շեշտված են պլաստիկ մշակումներով: Կամարակապ ամբողջ երկարությամբ ընդգծված սրահը նայում է ճեմարանի շենքին:

Սկսվել է Գեւորգյան ճեմարանի մարգաղահլիճի կառուցումը հարակից տարածքում. հեղինակն է Ջիմ Թորոսյանը: Կառույցը կդառնա ճեմարանի հյուսիսարեւելյան թեւը եւ միաժամանակ վանքի արեւելյան պարսպապատը, որը ավարտվում է հուշերի եւ մեծարման հավաքատեղիով, խաչքարերով լուծված մի հուշակոթողով: Ճեմարանի հյուսիսային կողմում՝ բակում, շուտով կավարտվի Ս. Հրեշտակապետաց մատուռ-եկեղեցու կառուցումը՝ ճարտարապետությամբ Ջիմ Թորոսյանի: Մատուռ եկեղեցին հիշեցնում է Անի քաղաքի բոլորակ Փրկչի եկեղեցին: Արտաքինից այն բազմանիստ է, նիստերն իրենցից ներկայացնում են խորշեր, որոնք խուլ պատերով բարձրանում են, վերին մասում տրոմպային անցումով դառնում են որմնակամարներ եւ ճակտոններ՝ ստեղծելով մի քիվ-գոտի, որից հետո նոր սկսվում են խաչապատկեր բացվածքները, որոնցով կազմվում է եկեղեցու թմբուկը: Կառույցը ավարտվում է հովհարաձեւ վեղարով: Եկեղեցին հիմնականում ծառայելու է ճեմարանի ուսանողների հոգեւոր կարիքների համար:

Վանքի հարավում Ղազարապատից դեպի հարավ ընկած տարածքը հատկացվեց միաբանական կացարաններին: Կացարանային շենքը երկհարկանի է, նկուղային հարկով: Շենքը կառուցված է տուֆ քարով, ստորին երկու շարքը իրականացված են բազալտ քարերով: Միաբանական կացարանների շենքը բաղկացած է մի քանի մասնաշենքերից: Հատակագծում արտաքին բաց սրահով, ներսում՝ միջանցքի շուրջ, դասավորված են հարմարավետ կացարաններ՝ յուրաքանչյուրը բաղկացած աշխատասենյակից եւ ննջարանից՝ կոմունալ բոլոր հարմարություններով: Արտաքուստ համեստ ճարտարապետական կառույցի քիվերը հորիզոնական նուրբ ջլատումներով են: Բաց խորքային պատշգամբների եւ պատուհանների ռիթմիկ շարքը միավորում է պատային հատվածները, դարձնում մեկ միասնական ճակատ: Նկուղային մասում տեղավորված են ճաշարանը՝ խոհանոցով, եւ տնտեսական այլ կառույցներ: Նախագծի հեղինակն է Ռուբեն Ազատյանը, կոնստրուկտորը՝ Հրանտ Իսագուլյանը:

Միաբանական կացարանի հյուսիսային կողմում գտնվող Ղազարապատի շենքը հարմարեցվել էր որպես սարկավագաց ննջարաններ, որի արեւելյան մասում Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից կառուցված էր վանատուն: Վանատունը հիմնովին վերակառուցվեց եւ նորոգվեց՝ հարմարեցվելով ժամանակի պայմաններին: Միաբանական կացարանների մասնաշենքերը, սարկավագաց ննջարանները վանատան հետ կազմում են մեկ կացարանային համալիր՝ առանձնացված բակով կազմելով կացարանային գոտին:

Կացարանային գոտուց դեպի արեւմուտք ձեւավորվեց թանգարանային գոտին՝ հիմք ունենալով Վազգեն Ա-ի կառուցած Գանձատունը: Գանձատան հարավարեւելքում գտնվող Խրիմյան թանգարանային շենքը վերանորոգվեց եւ դարձավ Արշիլ Գորկու անվան թանգարան՝ համապատասխան ցուցասրահներով: Հին վեհարանում, որը նույնպես թանգարանային շենք է, վերանորոգման աշխատանքներն արդեն սկսվել են: Այս շենքի հյուսիսարեւելյան մուտքը իր հարակից սենյակներով վերակառուցվեց-վերանորոգվեց եւ հարմարեցվեց թանգարաններ տանող մուտքի: Վեհարանի հյուսիսարեւմտյան մասում բարձրացավ երկհարկանի նոր դիվանատան երկհարկանի շենքը: Շենքը արտաքինից որոշ ճարտարապետական տարրերով կրկնում է վեհարանին, որով եւ ներդաշնակության մեջ է գտնվում նրա հետ: Դիվանատան արեւելյան գլխավոր մուտքը առաջին հարկբաժինը բաժանում է երկու թեւերի, ուր տեղավորված են հարմարավետ աշխատասենյակները: Առաջին հարկից ատիճանները տանում են երկրորդ հարկ, ուր շենքի երկարությամբ ձգվող միջանցքի շուրջ դասավորված են հոգեւորականների աշխատասենյակները. այստեղ են տեղավորված նաեւ Վեհափառ Հայրապետի աշխատասենյակը, նիստերի դահլիճը:

Դիվանատնից դեպի արեւելք՝ նախկին պարսպապատից դուրս, կառուցվեց նոր մկրտարանի շենքը: Հայ եկեղեցիաշինության մեջ Առաքելական Եկեղեցին առանձին կանգնած մկրտարաններ ունեցել է մինչեւ Ժ-ԺԱ դարերը:

Երուսաղեմի Մակար արքեպիսկոպոսի կանոնում, որը Վրթանես Հայրապետը Հայաստան բերեց, ասվում է. «Զի եթէ ոչ էր մերձ եկեղեցի շինեալ ի փառս Աստծոյ եւ ի մուտս ժողովրդոց, առանց մեղադրելոյ, եւ եթէ եկեղեցիս ունիմք, պարտ է եւ մկրտատունս առնել եւ աւազան, յորում մկրտէ որ գայցեն յուղիղ հաւատս բարեպաշտութեան»:

Հաշվի առնելով ներկայիս Մայր Տաճարի մի շարք գործառույթները, նպատակահարմարությունը՝ կառուցվեց առանձին մկրտարանի շենք Մայր տաճարի հյուսիսային կողմում: Քանի որ պահպանված առանձին կառույց-մկրտարաններ չունենք, ուստի խոսել դրանց լուծումների եւ ձեւերի մասին դժվար է:

Նորակառույց մկրտարանի հատակագծային եւ ծավալատարածական լուծումները որոշ չափով կրկնում են Սանահինի գրատան ծավալները որոնք նոր ծավալային լուծումներ են՝ նվիրված եկեղեցու մկրտման խորհրդին: Այն ունի մկրտման երկու սրահ՝ համապատասխան ավազաններով: Մկրտման սրահները ավարտվում են ռոտոնդաներով: Բետոնե կոնստրուկցիան հնարավորություն է տվել թեքադիր ծածկի հատվածներում ունենալ խաչապատկեր բացվածքներ: Մկրտարանի մուտքը հարավից երկկամարակապ սրահ է, որի աջ եւ ձախ կողմերում՝ նախկին պարսպապատի մեջ, տեղավորված են մկրտարանին սպասարկող մեկ հարկանի կառույցները:

Միաբանական կացարաններից դեպի հարավ՝ Մայր տաճար տանող ճանապարհի հարավային մասում, տեղավորվեց տնտեսական գոտին, այստեղ կառուցվեց ավտոտնտեսությունը եւ նրան սպասարկող այլ կառույցները մեկ միասնական

ծավալի մեջ, որոնք ունեին իրենց ներքին բակերը: Նախագծի հեղինակն Անահիտ Թարխանյանն է: Շինությունը մեկ հարկանի կառույց է՝ հարավից կամարակապ խուլ որմնապատուհանների ռիթմիկ պատով, արեւելքից եւ արեւմուտքից մեծ բացվածքներով:

Վերանորոգվեց նաեւ տպարանի շենքը, աշխատանքի համար ստեղծվեցին հարմարավետ պայմաններ, տպարանը համալրվեց նոր սարքավորումներով: Այս շենքում կատարվեցին նաեւ հիմքերի ջրամեկուսացման աշխատանքներ, քանի որ գրունտային ջրերի նիշի բարձրության պատճառով պատերը թրջվում էին մինչեւ 4 մ բարձրությամբ:

Նորակառույց շենքերը եւ արդեն քայքայված ինժեներական համակարգերը՝ ջեռուցում, էլեկտրալուսավորություն, ջուր եւ կոյուղի, հեռախոսակապ, խնդիր դրեցին նոր ինժեներական արտաքին եւ ներքին ցանցերի կառուցման, ինչպես նաեւ նոր կաթսայատան եւ էլեկտրաենթակայանի կառուցման:

Սկսվել են ամբողջ տարածքի բարեկարգման աշխատանքները: Ներսիսյան անտառում կառուցվեց հանգստի գոտի՝ մանկական խաղահրապարակներով:

2008 թ. մեկ անգամ եւս մաքրման եւ հարդարման աշխատանքներ կատարվեցին Մայր տաճարի ներսում: Փոխվեցին տաճարի կոպիտ մետաղական շրջանակներով 1970-ականներին տեղադրված պատուհանները, որոնք փոխարինվեցին փայտե, եռաշերտ ապակիներով՝ ջրանմեկուսիչ եւ ջերմամեկուսիչ, հեռակառավարվող պատուհաններով: Տեղադրվեցին նոր տեխնիկական սարքեր եւ բարձրախոսներ: Նորոգվեցին եկեղեցու բարձրարվեստ քանդակազարդ փայտե դռները: Առաջիկայում մայրավանքի տարածքում գտնվող այլ կառույցներ նույնպես կվերանորոգվեն եւ կվերակառուցվեն, դրանց թվում է նաեւ Խրիմյան բժշկական կենտրոնը, Ներսիսյան լիճը եւ մի շարք այլ կառույցներ:

Նոր վերածնություն վանքերին գաղափարախոսությամբ սկսվեցին վանքային համալիրների վերանորոգման եւ վերականգնման աշխատանքները:

2004 թ. սկսվել եւ արդեն ավարտին են մոտեցել Խոր Վիրապ վանքային համալիրի օժանդակ կառույցների հարավարեւելյան թեւի վերականգնման աշխատանքները:

2006-ին սկսվեցին Գեղարդավանքի օժանդակ կառույցների, հյուսիսային պարսպապատի, խարխլված եւ կիսաքանդ արեւելյան եւ հարավարեւելյան հատվածների վերականգնման աշխատանքները, որոնք ավարտվեցին 2007-ին: Հաջորդ փուլի վերականգնման աշխատանքների համար կատարվում են նախապատրաստական աշխատանքներ:

2008 թ. սկսվել են Հաղարծինի վանքի կառույցների վերականգնման աշխատանքները: Շուտով կավարտվեն վանքային համալիրի եկեղեցիների, գավիթների, սեղանատան վերականգնման ամրակայման աշխատանքները: Վերականգնման աշխատանքներին զուգահեռ իրականացվում են նոր վանատան կառուցման շինարարական աշխատանքները: Վանքի օժանդակ կառույցներն ավերվել էին, եւ պահպանվել էին միայն փլատակներ: Վանքի հոգեւոր դասի գործունեության համար ոչ

մի սպասարկող կառույց եւ կացարաններ չկային. անհրաժեշտ էր նոր վանատուն կառուցել: Վանատունը տեղադրված է վանքային համալիրի հյուսիսարեւմտյան մասում՝ վանքից հարյուր մետր հեռու, բլրի եզերում: Այն երկհարկանի մի կառույց է, պատերը տրավերտինե կիսակոպտատաշ քարերով: Վանատունը ունի իր կացարանները, որոնք բաղկացած են ննջարանից եւ աշխատասենյակից՝ լոգարանով եւ նախասրահով: Վանատունը ունի գրադարան, ճաշարան՝ խոհանոցով, ժողովարան: Վանքն ունենալու է իր տնտեսական կառույցները՝ կաթսայատուն, էլեկտրաենթակայան: Նախագծի հեղինակն է ճարտարապետ Էդուարդ Գրիգորյանը:

2006 թ. սկսվել են Հառիճի վանքային համալիրի դպրատան վերականգնման աշխատանքները: Նորոգվել են դպրատան տանիքածածկերը: Դպրանոցի սանների համար առաջին հարկում նախատեսված է կառուցել ննջարաններ՝ լոգարանով, ճաշարան՝ խոհանցով: Շենքի երկրորդ հարկում նախագծվել են լսարաններ, գրադարան, համակարգչային սենյակ, ուսուցչանոց: Վերականգնման շինարարական աշխատանքները սկսվել են նաեւ վանքի Ս. Աստվածածին եկեղեցում: Վերականգնված դպրանոցը իր դռները շուտով կբացի ուսանողների առաջ:

Վերականգնվել է Գյումրիի Յոթ Վերք - Սուրբ Աստվածածին եկեղեցին: Եկեղեցու քարե ծածկույթը քայքայված էր, եւ ջրերը թափվում էին կառույցի ներսը: Վերանորոգվեցին ծածկերը, ամրկայվեցին ճաքերը: Իրականացվեցին եկեղեցու պատերի հարդարման աշխատանքները: Վերականգնվեց երգչախմբի համար նախատեսված պատշգամբը, հղկվեց հատակը, վերականգնվեցին փայտե դռները, փոխվեց էլեկտրական ցանցը:

Վերանորոգվեցին Բջնի գյուղի վանքային համալիրի Սուրբ Աստվածածին եկեղեցու ծածկերը: Առատ բուսականությամբ տանիքածածկի քարերը հանվեցին, բուսականությունը արմատախիլ արվեց եւ մաքրվեց: Քարե տանիքածածկը վերականգնվեց: Այս կառույցում պատի ճաքերը կարվեցին իտալական մեթոդով եւ տեխնոլոգիայով: Նորոգվեցին նաեւ հատակները: Եկեղեցու ներսում էլեկտրական հոսանք քաշվեց: Վերականգնման աշխատանքներ կատարվեցին նաեւ վանքի մուտքային հատվածում:

2004-ից սկսվեցին նաեւ Գայանե վանքային համալիրի միաբանական կառույցների վերականգնման աշխատանքները:

Վերակառուցվեց հյուսիսային թեւի միաբանական շենքը որպես ննջարանային մասնաշենք՝ հարմարավետ պայմաններով եւ հարմարավետ նկուղային հարկաբաժնով: Մյուս մասնաշենքը վերականգնվեց, եւ այստեղ տեղավորվեց վանահոր աշխատասենյակը եւ ընդարձակ ժողովարանը: Վերականգնվեց Ռաֆայել Իսրայելյանի նախագծով կառուցված սեղանատունը խոհանոցային հատվածի հետ միասին: Վանքի համար կառուցվեց կաթսայատուն: Վերանորոգվեց վանքի հասարակական սանհանգույցը նոր կոյուղագծով:

Նույն ժամանակ սկսվել եւ այժմ էլ շարունակվում են Հռիփսիմե վանքային համալիրի միաբանական կառույցների վերականգնման աշխատանքները:

Առաջիկայում նախատեսվում են վերականգնման աշխատանքներ Տաթեւի

վանքային համալիրում: Այժմ կատարվում են նախնական եւ նախապատրաստական աշխատանքները: Վանքի վերականգնման հետ կվերականգնվի վանքի նախկին՝ հոգեւոր կրթօջախի գործառույթը:

Հայաստանի շատ մարզային կենտրոններ, ինչպես նաեւ Երեւան քաղաքի թաղամասերը, չունեին եկեղեցիներ: Հայաստանի անկախությունը իր հետ բերեց նաեւ նոր եկեղեցիների կառուցման ոգու պահանջ: Ծավալվեց մեծ ծրագրային աշխատանք՝ կառուցելու եկեղեցիներ Երեւան քաղաքի մեծ թաղամասերում եւ մարզերի մեծ քաղաքներում:

Հայ Առաքելական Եկեղեցին բոլոր ժամանակների համար եղել է հայոց ազգի ամուր շրջանակը, ամբողջության մեջ է պահել ազգին այնքան հատուկ եւ բնորոշ քրիստոնեական կերպարը եւ իր շուրջն է համախմբել հայ ժողովդին:

Վեհափառ Հայրապետի վերջին տասը տարիների ձեռնարկումները հնարավորություն տվեցին Աստվածային փառաց տաճարների կառուցման մի շարք քաղաքներում եւ մարզային կենտրոններում: Կառուցվեցին եւ այժմ արդեն գործում են կամ շինարարության ընթացքում են՝

Վանաձոր քաղաքի Սուրբ Նարեկացի եկեղեցին
Գյումրի քաղաքի Սուրբ Հակոբ եկեղեցին
Բերդ քաղաքի եկեղեցին
Սեւան քաղաքի եկեղեցին
Իջեւան քաղաքի եկեղեցին
Դիլիջան քաղաքի եկեղեցին
Աբովյան քաղաքի եկեղեցին
Երեւանի Էրեբունի թաղամասի եկեղեցին
Երեւանի Արաբկիր թաղամասի եկեղեցին
Երեւանի Սուրբ Երրորդություն եկեղեցին
Մասիս քաղաքի եկեղեցին
Արտաշատ քաղաքի եկեղեցին:

Եկեղեցիների կառուցումը անհրաժեշտություն էր նաեւ այն գյուղերում, ուր եկեղեցի չկար, կամ գոյություն ունեցողները ավերված էին: Ընդհանուր առմամբ կառուցված եւ կառուցվող եկեղեցիների, մատուռների քանակը այժմ հավակնում է մեկ հարյուրի: Վերականգնվեցին նաեւ գյուղերում գտնվող գողտրիկ շատ մատուռներ ու եկեղեցիներ: Սա դեռ ամենը չէ: Պերճախոս իրականություն է նաեւ այն, որ արտերկրում գտնվող շատ գաղթօջախներում եւ համայնքներում նույնպես սկսեցին կառուցվել Հայ Առաքելական Եկեղեցիներ՝ Մոսկվա, Օմսկ, Նովոսիբիրսկ եւ մի շարք այլ քաղաքներում: Կանգուն եկեղեցիների եւ տեւում մնաց տասը տարիների անխոնջ աշխատանքը իր բոլոր փուլերով՝ նախագծային աշխատանքների համաձայնեցումից ու հաստատումից, հիմնարկեքից մինչեւ շինարարական աշխատանքների ավարտը, մինչ խաչի օրհնությունը: Հայ եկեղեցիաշինության եւ ճարտարապետության համար փառավոր էջ բացվեց:

Ճարտարապետությունը եւ շինարարությունը դանդաղ առաջ ընթանալով՝ դարերի ընթացքում ասպիճանաբար կատարելագործվել են՝ տալով նոր որակ: Վերջին տասնամյակում կառուցված նորակառույց եկեղեցիները պահպանել են հայ եկեղեցիաշինության եւ ճարտարապետության առանձնահատկությունները, կոմպոզիցիոն կառուցվածքը, ներդաշնակ մասնատումները եւ ժամանակին համահունչ զարդամոտիվները:

Կառուցված եկեղեցիները հիմնականում կրկնում են ավանդական եկեղեցու հատակաձեւը՝ արտաքուստ քառակուսի կամ քիչ ձգված ուղղանկյուն, հզոր չորս որմնամույթեր, որոնցով կազմված կամարները իրենց վրա են կրում գմբեթը:

Թմբուկները արտաքուստ բազմանիստ են, նրանցից որոշները հարդարված են որմնակամարներով: Եկեղեցիների բացվածքները բավականին մեծ են, այս հնարավորությունը ընձեռում է երկաթբետոնե կոնստրուկտիվ համակարգը:

Եկեղեցիները ներքուստ խաչաձեւ են, անկյուններում ավանդատներով, որոնցից հյուսիսարեւմտյանը հաճախ ծառայում է ասպիճանավանդակի համար: Ասպիճանները այստեղից տանում են երկրորդ հարկ, ուր տեղավորված պատշգամբը երգչախմբի համար է նախատեսված: Թմբուկները պսակվում են նիստավոր կամ հովհարաձեւ վեղարներով:

Եկեղեցիների արտաքին խուլ հարթությունները ունեն ուղղաձիգ ջլատումներ խորշերի ձեւով, նմանատիպ դասական եկեղեցաշինությանը: Զանգակատները հատակագծում հիմնականում քառակուսի են, կանգնած առանձին կամ եկեղեցու ծավալի մասն են կազմում՝ հիմնականում սնամեջ, կամարակապ բացվածքներով, պսակված թմբուկով եւ բազմանիստ վեղարով: Հաշվի առնելով կառույցների ներկայիս սեյսմիկ պահանջները՝ դրանց բոլորի կրող կմախքները երկաթբետոնե են: Քարը հիմնականում գործածվում է իբրեւ հարդարման երեսպատման նյութ:

Բացի արտաքինից քառակուսի եւ ուղղանկյուն հատակաձեւերից կառուցվել են նաեւ բոլորակ եկեղեցիներ: Արտաքին բոլորակը հիմնականում ձեւավորված է նիստերից: Այս եկեղեցիների հատակաձեւը ներսից կրկնում է դասական ութախորան տիպը:

Բոլորակ տիպերը հիմնականում արտաքինից երկհարկ կամ եռահարկ են: Այս եկեղեցիներում նույնպես կրող կոնստրուկտիվ համակարգը երկաթբետոնե կմախքն է: Կառուցված եկեղեցիները, իհարկե, առանձին կանգնած կառույցներ են, սակայն դրանք ունեն հարակից կառույցներ՝ երիցատներ, օժանդակ կառույցներ: Ի տարբերություն դասական եկեղեցիների շինարարական արվեստում կրած տեխնոլոգիական փոփոխությունների՝ փոփոխված է նաեւ եկեղեցիների հարկայնությունը: Հիմնականում դրանք ունեն նկուղային հարկ, որը նրանց համար ծառայում է որպես քարոզչական ժողովատեղի՝ իր ծառայողական եւ տնտեսական սենյակներով, կիրակնօրյա դպրոցի դասասենյակներով: Դասական եկեղեցաշինության հետ համեմատած՝ այժմ բոլոր եկեղեցիները ունեն երգչախմբին հատկացված հարկաբաժին:

Եկեղեցիները իրենց ծավալատարածական լուծումներով պահպանել են հայ եկեղեցիաշինության ոճը եւ հարազատ մնացել պատմական կերպարին:

Ճշմարտասեր, ազնվացած սրտի ու մտքի կատարյալ դաստիարակությամբ օժտված մարդուն է հատուկ անխոնջ աշխատանքի արդյունքում կրթական եւ բարեգործական հաստատություններ ստեղծելու գործը: Երեւան, Գյումրի, քաղաքներում վերանորոգվում եւ ժամանակին համընթաց սարքավորումներով կահավորվում են մշակույթի տարբեր բնագավառներում հայ մանուկներին կրթող եւ հայ Առաքելական հավատքի մեջ պահող Հայորդյաց տները: Այս կառույցները նախկին Պիոներ պալատներն էին՝ համայնավարական կարգերից մնացած, բարոյապես մաշված եւ ֆիզիկապես քայքայված: Այս կառույցներից պահպանվեց միայն շենքի կմախքը:

Շենքերը իրենց ներքին կառուցվածքով եւ հատակագծային լուծումներով հիմնովին վերահատակագծվեցին, կոնստրուկտիվ առումով ուժեղացվեցին եւ վերակառուցվեցին: Նախագծային առաջադրանքից ու առաջարկից մինչեւ աշխատանքային նախագիծ, յուրաքանչյուր գործառական խնդիր ստուգվել եւ ճշգրտվել, եւ գտնվել է Վեհափառ Հայրապետի անմիջական վերահսկողության տակ: Փորձառու ճարտարապետի աչքը երբեմն անկարող էր տեսնել, այն ինչ տեսնում էր Վեհափառ Հայապետը: Ճարտարապետներից առավել հատակագծային ֆունկցիոնալ լուծումների նպատակահարմար առաջարկները եւ դիտողությունները արվում էին Վեհափառ Հայրապետի կողմից, որոնք եւ կյանքի կոչվեցին:

Վանաձոր քաղաքի մանուկների համար կառուցվեց, կահավորվեց եւ շահագործման հանձնվեց հիմնովին նորակառույց Հայորդյաց տունը, որի հեղինակ ճարտարապետը Մարիամ Մովսիսյանն է: Կառույցը երկհարկանի շինություն է՝ կիսանկուղային հարկով, որն ունի լուսավոր եւ հարմարավետ դասասենյակներ, համակարգչային ուսուցման դասասենյակներ, հանդիսությունների եւ մարզական դահլիճներ, թենիսի եւ վոլեյբոլի բաց դաշտեր:

Բոլոր Հայորդյաց տներն ունեն բարեգործական ճաշարաններ: Հայորդյաց տների վերականգնման եւ նորերի կառուցման հետ միաժամանակ Երեւան քաղաքի Արաբկիր թաղամասի Ահարոնյան 2/2 հասցեում գտնվող մանկապարտեզը նորովի վերակառուցվեց եւ հարմարեցվեց մանկապան՝ փոքրիկ բակով եւ հարմարավետ ննջասենյակներով, լոգարան-ցնցուղարաններով եւ դասասենյակներով, բժշկի եւ դայակի սենյակներով, ճաշարանով եւ խոհանոցով:

Սկսվել են Ս. Գայանե վանքի բակում գտնվող երկհարկանի շենքի նորոգման եւ ուժեղացման աշխատանքները: Նորոգումից հետո այն նույնպես կդառնա հարմարավետ մանկապուն:

Էջմիածին քաղաքի Կոստանյան 8 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի շենքը նորոգվեց, վերակառուցվեց որպես ծերանոց 40 ծերերի համար: Կառույցը բաղկացած է երեք մասնաշենքերից, որոնցից երկուսը ննջարանային մասնաշենքեր են՝ տեղավորված ճաշարանային մասնաշենքի աջ եւ ձախ կողմերում: Վերանորոգվեց Երեւան քաղաքի Քանաքեռ թաղամասում գտնվող Սուրբ Հակոբ եկեղեցին եւ նրա նախկին օժանդակ կառույցը, ուր տեղավորվեց մանրանկարչության կենտրոնը: Այստեղ մանրանկարչության այբուբենին են ծանոթանում եւ կրթվում բազմաթիվ մանուկներ:

Տարբեր տեսակի մասնակի նորոգչական աշխատանքներ են կատարվել Արաբկիրի, Մալաթիայի, Նորքի զանգվածի, Աշտարակ քաղաքի «Հայորդյաց տներում»: Վերջիններս այժմ սպասում են վերջնական հիմնանորոգման աշխատանքներին:

Քարոզչական աշխատանքը կարեւոր հանգամանք է ժողովրդին հավատքի մեջ պահելու համար, եւ նրա կառույցներից մեկն էլ հեռուստատեսությունն է: Ահա այս նպատակով էր, որ «Շողակաթ» հեռուստաընկերության համար այնքան անհրաժեշտ շենքը՝ Երրորդ մասի նախկին մշակութային պալատը, հիմնովին նորոգվեց: Վերակառուցված եւ նորոգված եռահարկ շենքը բոլոր պայմաններն ու սարքավորումներն ունեցող հեռուստաընկերություն է՝ իր տաղավարներով եւ աշխատասենյակներով:

Սրանք բոլորն էլ բազմաբնույթ աշխատանքների սկիզբն են, իսկ ծրագրերը բազմաթիվ են եւ շարունակական: Արդեն կանգուն հրաշագեղ այս կոթողները խոսուն վկաներն են Գարեգին Բ Հայրապետի բարձրագույն գաղափարների իրագործման եւ հոգեւոր ու մշակութային նոր վերածնության: Ուրեմն, կանաչ ճանապարհ այդ աշխատանքը իրականացնողին, եւ թող նրան մշտապես ուղեկցի Աստծո Օրհնությունը: